# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

## ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

0095, Երևան, Բաղրամյան 19, հեռ. (011) 51 32 42, էլ. փոստ rustam.makhmudyan@parliament.am

N _____

04 դեկտեմբերի 2017թ.

**ՀԵՏՔ պարբերականի լրագրող**
**ՍԵԴԱ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ**

***Ի պատասխան տեղեկություն ստանալու***
***վերաբերյալ Ձեր հարցման***

**Հարգելի Սեդա Ղուկասյան**

Պատգամավորական գործունեություն ծավալելու ժամանակաշրջանից ի վեր *(ԱԺ 6-րդ գումարման առաջին և երկրորդ նստաշրջանների ընթացքում)* իմ կողմից Ազգային ժողովի վարչական շենքում կազմակերպվել է քաղաքացիների ընդունելություն երեք անգամ, որի ժամանակ մեզ են դիմել թվով 10 քաղաքացիներ: Վերջիններիս կողմից բարձրացված հարցերը և խնդիրները հիմնականում առնչվել են ֆինանսական աջակցություն ստանալու խնդրանքին, բռնադատվածի կարգավիճակից բխող գործողություն կատարելու հայցման, հաշմանդամության կարգ ստանալու ընթացակարգին և իրավախորհրդատվություն ստանալուն՝ կապված որոշակի օրենքների դրույթների մեկնաբանման հետ:

Ընդունելության ժամանակ բոլոր դիմումատուներին տրվել են բավարար և սպառիչ պատասխաններ՝ պատգամավորի լիազորությունների շրջանակում:

Բացի այդ, պատգամավորական գործունեություն ծավալելու ժամանակաշրջանից ի վեր առցանց և թղթային տարբերակներով ինձ են դիմել շուրջ 20 քաղաքացիներ, որոնց մի մասի դիմումներին ընթացք են տրվել՝ համապատասխան պետական մարմիններից պարզաբանումներ ստանալու ձևով, որոնցից ստացվել են սպառիչ գրավոր պատասխաններ: Նշված գրությունների հիման վրա արդեն որոշ դիմումատուներին տրվել են գրավոր պատասխաններ:

Քաղաքացիների ընդունելություն իմ կողմից կազմակերպվել է նաև Արագածոտնի մարզում ընտրողների հետ հանդիպման ընթացքում, որոնց մասնակցել են շուրջ մեկ տասնյակ քաղաքացիներ: Նրանց կողմից բարձրացված հարցերը եղել են տարաբնույթ՝ ընտանեկան նպաստին, հաշմանդամության կարգ

ստանալուն, բնակարանային պայմանների բարելավման ուղղված և այլ բնույթի հարցեր:

Ինչ վերաբերում է քաղաքացիների դիմումների հիման վրա օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալուն, տեղեկացվում է, որ կան որոշակի հարցեր, որոնց լուծումը կապված է օրենքի դրույթներում փոփոխություններ կատարելու հետ, որոնց ուղղությամբ ներկայումս կատարվում են ուսումնասիրություններ: Սակայն, երկու քաղաքացու կողմից ներկայացված առաջարկների հիման վրա ԱԺ շրջանառության մեջ դրված օրենքների նախագծերի վերաբերյալ ներկայացվել են առաջարկություններ, որոնք ընդունվել են նախագծի հեղինակների կողմից: Խոսքը մասնավորապես վերաբերում է ՀՀ Հողային և քաղաքացիական օրենսգրքերում, ինչպես նաև ''Պետական և ծառայողական գաղտնիքի մասին'' ՀՀ օրենքների նախագծերում կատարված փոփոխություններին և լրացումներին:

Ինչ վերաբերում է քաղաքացիների ընդունելությունից լուսանկարների առկայությանը, հայտնվում է, որ այդպիսիք չկան, իսկ դիմումները և կից փաստաթղթերը չեն կարող հրապարակվել, քանի որ դրանք անձի վերաբերյալ տեղեկությունների բացահայտում են, որոնք կարող են հրապարակվել բացառապես քաղաքացիների համաձայնությամբ:

Մինչև տարեվերջ նախատեսվում է քաղաքացիների ևս մեկ ընդունելություն:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝**

**ՌՈՒՍՏԱՄ ՄԱԽՄՈՒԴՅԱՆ**